BACCALAURÉAT GÉNÉRAL

SESSION 2018

ARMÉNIEN

LANGUE VIVANTE **1**

Série **L –** Durée de l'épreuve : **3 heures** – coefficient : **4**

Séries **ES-S** – Durée de l'épreuve : **3 heures** – coefficient : **3**

Le candidat traitera, dans la langue étrangère, l'ensemble des questions de l'épreuve pour laquelle il compose.

L'usage du dictionnaire est interdit.

Dès que ce sujet vous est remis, assurez-vous qu'il est complet.
Ce sujet comporte 7 pages numérotées de 1/7 à 7/7.

Répartition des points

Compréhension de l'écrit	10 points
Expression écrite	10 points

Texte en arménien occidental

Հանդիպում

Վախթանգ Անանեան

Պարտէզը, նստարանին վրայ համեստ դէմքով տիկին մը նստած գիրք կը կարդար։ Ռուս էր։ Ափսոս, որ ռուսերէն լաւ չեմ խօսիր, եւ այդ է պատճառը, որ այստեղ ոչ մէկուն հետ կ՚ընկերանամ։ Բայց միայն այդ չէ, այլ նաեւ իմ բնական ամօթխածութիւնս[1], հետամնաց[2] գիւղի, նախկին կովարածի[3] ամօթխածութիւնս, որ հետս բերած եմ մեր լեռներէն։ Այդ ամօթխածութիւնն էր պատճառը, որ ես մի քանի օր առաջ Սեւ Ծովու ափերէն փախայ Կիսլովոդսկ[4]։ Հազարաւոր տղամարդ ու կին ծովը միասին կը լողային եւ կիսամերկ կը փռուէին[5] աւազին վրայ՝ քով–քովի...

Ու հիմա կեցած եմ այդ տիկնոջ առջեւ կարկամած[6] ու կ՚ամչնամ նոյնիսկ ձգել երթալու։

Ան գլուխը բարձրացուց եւ հաւանաբար իմ գեղջկական[7] կարմրած դէմքէս վիճակս հասկնալով, սիրալիր ժպտաց ու հարցուց.

— Ի՞նչ կը կամենաք[8], երիտասարդ։

— Ներեցէք, ես... ես... չեմ գիտեր որո՞ւն դիմեմ...— կմկմացի ես։

— Նստեցէք եւ խօսեցէք համարձակ, դուք հաւանաբար առաջին անգամն է որ ամառանոց կը գտնուիք,— ըսաւ ան այնքան բարեկամաբար, որ ես քաջալերուած՝ նստեցայ ու սկսայ իմ կոտրտած ռուսերենովս։

---

[1] ամոթխածութիւն - pudeur
[2] հետամնաց – arriéré
[3] կովարած - berger
[4] Կիսլովոդսկ – Kislovodsk, ville en Russie
[5] փռուիլ – s'allonger
[6] կարկամած - embarassé
[7] գեղջկական - paysan
[8] կամենալ – désirer, souhaiter

— Այո, առաջին անգամ... Մինակ եմ, կ՛ուզեմ նշանաւոր տեղեր տեսնել, բայց ցոյց տուող չկայ...., օրինակ Լերմոնտովի[10] սպաննուելու տեղը…

— Ուրիշ ի՞նչ տեղեր կ՛ուզէիք տեսնել,— հարցուց ան հետաքրքրութեամբ զիս զննելով[11]:

Ես պատասխանի փոխարէն ծոցէս հանեցի քեռիիս տուած քարտէզը, որուն վրայ կարմիր մատիտով նշաններ կային :

— Քեռիս է տուած, որ երթամ, բոլորը տեսնեմ,— թոթովեցի ես: […]

— Ո՞ւր կուզէիք երթալ այսօր, — հարցուց ան ոտքի ելլելով:

— Տարբերութիւն չ՛ըներ, գոնէ Լերմոնտովի մենամարտի[12] տեղը:

Կ՛ըսէք թէ ինչպէ՞ս երթամ:

— ես կ՛ընկերանամ ձեզի,— ըսաւ ան եւ աւագ քրոջ մտերմութեամբ թեւս մտաւ: […]

Այդ օրը Լերմոնտովի մենամարտի վայրը գտնուեցանք : Գլխարկս հանեցի ու հուզումով նայեցայ հանճարեղ բանաստեղծին արձանին:

Տիկինը գաղտնի հայեացքով կը զննէր զիս: Այս անգամ չխնդաց վրաս, ըստ երեւոյթին, չուզեց վիրաւորել զգացումներս: Ան Լերմոնտովի «Դեւ »–ը արտասանեց կարծես իրեն համար:

Վա՛յ, այս որքա՜ն լաւ, որքան երաժշտական կ՛արտասանէ: Աս ամպայման ակումբները արտասանած կ՛ըլլայ:

Վերադարձանք եւ բաժնուեցանք քաղաքին հանրային պարտէզը:

---

[9] քաջալերուած - encouragé
[10] Լերմոնտով – Mikhaïl Lermontov, écrivain russe
[11] զննել – scruter, examiner
[12] մենամարտ - bataille

TRAVAIL À FAIRE PAR LE CANDIDAT

I. COMPRÉHENSION DE L'ÉCRIT : (10 points)

1. Հեղինակը ո՞ւր կը ծանօթանայ ռուս տիկնոջ հետ:
2. Հեղինակը ինչո՞ւ Ռուսիա եկած է:
3. Հեղինակը ինչպէ՞ս ընտրած է իր այցելելիք տեսարժան վայրերը:
4. Ու՞ր կ՛երթան հեղինակը եւ ռուս տիկինը:
5. Հեղինակը ինչո՞ւ կը յուզուի Լերմոնտովի արձանին առջեւ:
6. Traduire de la ligne 1 «Պարտէզը, նստարանին վրայ...» jusqu'à la ligne 5 « ... մեր լեռներէն:»

II. EXPRESSION ÉCRITE : (10 points)

Afin de respecter l'anonymat de votre copie, vous ne devez pas signer votre composition, citer votre nom, celui d'un camarade ou celui de votre établissement.

Traitez les deux sujets. (120 mots minimum pour chaque question)

1. Հեղինակը ինչո՞ւ կ՛ամչնայ ռուս տիկնոջ հետ խօսելու: Բացատրեցէք, թէ ինչու՞ գիւղացի տղաքը աւելի ամչկոտ կ՛ըլլան:

2. Պատմեցէք թէ դուք ինչպէ՞ս կ՛ընտրէք ձեր այցելելիք տեսարժան վայրերը, երբ արձակուրդի կը մեկնիք:

Վախթանգ Անանյան

Հանդիպում

Այգում, նստարանի վրա համեստ դեմքով մի տիկին նստած գիրք էր կարդում: Ռուս է: Ափսոս, որ ռուսերեն վատ եմ խոսում, և այդ է պատճառը, որ այստեղ ոչ ոքի հետ չեմ ընկերանում: Բայց միայն դա չէ, այլև իմ բնական ամոթխածությունը[1], հետամնաց[2] գյուղի, նախկին տավարածի[3] ամոթխածությունը, որ ես բերել եմ հետս մեր սարերից: Այդ ամոթխածությունն էր պատճառը, որ ես մի քանի օր առաջ Սև ծովի ափերից փախա Կիսլովոդսկ[4]: Հազարավոր տղամարդ ու կին միասին լողանում էին ծովում և կիսամերկ փռվում[5] ավազի վրա՝ կողք–կողքի...

Ու հիմա կանգնել եմ այդ տիկնոջ առաջ կարկամած[6] ու ամաչում եմ նույնիսկ շուռ գալ[7], գնալ:

Նա գլուխը բարձրացրեց և հավանաբար իմ գեղջկական[8] կարմրած դեմքից դրությունս հասկանալով, սիրալիր ժպտաց ու հարցրեց.

— Ի՞նչ եք կամենում, երիտասարդ:

— Ներեցեք, ես... ես... չգիտեմ ու՞մ դիմեմ...— կմկմացի ես:

— Նստեցեք և խոսեցեք համարձակ, դուք հավանաբար առաջին անգամն եք լինում ամառանոցում,— ասաց նա այնքան բարեկամաբար, որ ես սիրտ առած[9]՝ նստեցի ու սկսեցի իմ կոտրտված ռուսերենով:

---

[1] Ամոթխածություն - pudeur
[2] Հետամնաց – arriéré
[3] Տավարած - berger
[4] Կիսլովոդսկ – Kislovodsk, ville en Russie
[5] Փռվել – s'allonger
[6] Կարկամած - embarassé
[7] Շուռ գալ - tourner
[8] Գեղջկական - paysan
[9] Սիրտ առած - encouragé

— Այո, առաջին անգամ... Մենակ եմ, ուզում եմ նշանավոր տեղեր տեսնել, բայց ցույց տվող չկա.... ա՞յ, օրինակ Լերմոնտովի[10] սպանվելու տեղը…

— Էլի ի՞նչ տեղեր կուզենայիք տեսնել,— հարցրեց նա հետաքրքրությամբ ինձ զննելով:

Ես պատասխանի փոխարեն ծոցիցս հանեցի քեռուս տված քարտեզը, որի վրա կարմիր մատիտով նշաններ կային արած:

— Քեռիս է տվել, որ գնամ, բոլորը տեսնեմ,— թոթովեցի ես: […]

— Ո՞ւր կուզեիք գնալ այսօր, — հարցրեց նա վեր կենալով:

— Մեկ է, թեկուզ Լերմոնտովի մենամարտի[11] տեղը: Կա՞սեք ինչպես գնամ:

— Ես կուղեկցեմ ձեզ,— ասաց նա և ավագ քրոջ մտերմությամբ թևս վերցրեց: […]

Այդ օրը եղանք Լերմոնտովի մենամարտի վայրում: Գլխարկս հանեցի ու հուզմունքով նայեցի հանճարեղ պոետի արձանին:

Տիկինը թաքուն հայացքով զննում էր ինձ: Այս անգամ չծիծաղեց վրաս, ըստ երևույթին, չուզեց վիրավորել զգացմունքներս: Նա Լերմոնտովի «Դև »–ն արտասանեց կարծես իր համար:

Վա՛հ, այս ինչքա՛ն լավ, ինչքան երաժշտական է արտասանում: Սա անպայման ակումբներում արտասանելիս կլինի:

Վերադարձանք և բաժանվեցինք քաղաքային զբոսարանում:

[10] Լերմոնտով – Mikhaïl Lermontov, écrivain russe
[11] Մենամարտ - bataille

TRAVAIL À FAIRE PAR LE CANDIDAT

I. COMPRÉHENSION DE L'ÉCRIT : (10 points)

1. Հեղինակը որտե՞ղ է ծանոթանում ռուս տիկնոջ հետ:
2. Հեղինակը ինչու՞ է Ռուսաստան եկել:
3. Ինչպե՞ս է հեղինակը ընտրել, թե ինչ տեսարժան վայրեր այցելել:
4. Ու՞ր են գնում հեղինակը եւ ռուս տիկինը:
5. Ինչու՞ է հեղինակը հուզվում Լերմոնտովի արձանի մոտ:
6. Traduire de la ligne 1 «Այգում, նստարանի վրա ...» jusqu'à la ligne 5 « ... մեր սարերից:»

II. EXPRESSION ÉCRITE : (10 points)

Afin de respecter l'anonymat de votre copie, vous ne devez pas signer votre composition, citer votre nom, celui d'un camarade ou celui de votre établissement.

Traitez les deux sujets. (120 mots minimum pour chaque question)

1. Ինչու՞ է հեղինակը ամաչում խոսել ռուս տիկնոջ հետ: Բացատրեք, թե ինչու՞ են գյուղացի տղաները ավելի ամաչկոտ:
2. Պատմեք, թե Դուք ինչպես եք ընտրում, թե ինչ տեսարժան վայրեր այցելել արձակուրդների մեկնելիս: